



ՍՈՒՐԻ ԷՔՐԻՄՈՍԻՆ ԻՄԱՅՐ ՏԻՆՆԱՐԸ ՎԵՐԱՆՈՒՆԻՑՈՒՄ ԶԱՐԳԱՎԱՅԻՆ, ԳՐԻՐԱՅԻՆ



## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### «ԵԿԱՑԻ ՇԻՆԵՍՅՈՒԻՒԹ ՍՈՒՐԲ ԶԻՈՐԱՆՆ ԼՈՒՍՈՑ»



ոյնմբեր ամսի վերջերին Մայր Աթոռում ավարտվեց 1958—1959 թվականի շինարարական տարին: Ամսագրի սույն համարում հրատարակվել է պաշտոնական հաղորդագրություն 1958—1959 շինարարական տարում հիմնականում Մայր Աթոռում կատարված շինարարական աշխատանքների մասին:

Արժան է կանգ առնել 1959 թվականին կատարված շինարարական այն աշխատանքների վրա, որոնք վեհափառ Հայրապետի գլխավորությամբ առաջ տարվեցին և Մայր Աթոռի շրջապատում և՛ նրա սահմաններից դուրս:

Միայն նշմարառությունը արձանագրած կլինենք այստեղ, երբ, բարգվաճ հանդիսանալով հասարակաց սուրստության և խանդավառության, եշենք, որ ինչպես Մայր Հայրենիքի շինության և հայ ժողովրդի բարօրության շենքի վրա դրված յուրաքանչյուր քար, այնպես էլ Մայր Աթոռում կատարված յուրաքանչյուր շինարարական աշխատանք անսահման գոհունակություն և հպարտություն է պատճառում բոլոր նրանց, որոնք նշմարիտ և ազնիվ զգացմունքներով սիրում են Հայրենիքն ու Ս. էջմիածինը, սուրստանում են այդ երկուսի հարահուն վերելքի պայծառ հեռանկարով:

Մեկ տարի է անցել այն օրվանից, երբ վեհափառ Հայրապետը, 1958 թվականի հոկտեմբերին, Մայր Աթոռում կարդացած Իր եռամյա գործունեության նվիրված զեկուցագրում, «հոգեկան բավարարությամբ» ազգին էր ներկայացնում ցուցակը Իր օրով և Իր

անմիջական հսկողության տակ կատարված շինարարական աշխատանքների և նշում 1959 թվականի շինարարական աշխատանքների ծրագրերը:

Անցնող 1958—1959 շինարարական տարին նոր հաջողությամբ է պսակել մեր Շինարար Հայրապետի անունն ու գործունեությունը: Քառերեկ արդեն խոստում են, որպես կենդանի վկայություն, կատարված շինարարական աշխատանքների մասին: Վեհափառ Հայրապետը, հավատով և շինարարական ավյունով լցված, եռանդագին լծվել է և՛ շինարարական և՛ վանական-վարչական, կազմակերպչական աշխատանքների, ամեն օր մի նոր քար ավելացնելով Մայր Աթոռի և մեր հին պատմական վանքերի վերանորոգության աշխատանքների բնագավառում:

Անցնող մեկ տարվա ընթացքում կատարվեցին հետևյալ աշխատանքները.

1. ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՎԱԳ ՍԵՂԱՆԸ.— Ավագ Սեղանը կառուցված է վարդազույն փղոսկրի գույն ունեցող իտալական մարմարով, ֆանդակված հայկական ոճով, նարտարապետ Ռ. Իսրայելյանի նախագծով: Ավագ Սեղանը առջևի անկյուններում ունի երկու արծիվներ, գործ ֆանդակագործ Արա Հարությունյանի: Արծիվները, Չվարթնոցի խոյակների արծիվների օրինակով, հուժկու պարզել են իրենց քեներ և պահում են սեղանը: Ավագ Սեղանը և նրա շուրջը, բեմի հատակը և նրա երկու կողմից բեմ բարձրացող աստիճանները երեսուպատվել են Հայաստանի շատ գեղեցիկ մարմարներից մեկով՝ Աղվերանի մարմարով:

Ավագ Սեղանի տեղամասում շինարարական աշխատանքներին նախորդել են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կողմից կազմակերպված մանրագրերն պեղումները բեմի ամբողջ մակերեսով, ղեկավարությամբ ճարտարապետական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Մահիբյանի: Կատարված այս պեղումներով շատ արժեքավոր նյութեր հայտնաբերվեցին: Այժմյան Ս. Սեղանի տակ, մոտ 1,5 մետր խորությամբ երևան եկան Ե դարում վաճառ Մամիկոնյանի կողմից կառուցված Ավագ Սեղանի խարխուլները, բեմը և վեմը փակերը, որոնք պահպանված էին անկարճ միջանկյալ: Ավագ Սեղանի կենտրոնում հայտնաբերվեց թանձան մի կրակարան, մեջը մոխիր: Հատկանշական է, որ Ե դարի վեմը փակերը դրված է եղել ուղիղ կրակարանի վրա, որպիսի հանգամանք, հավանաբար, հանդիսացել է հեթանոսական պաշտամունքի նկատմամբ ֆրիստոնեական կրոնի հաղթանակի խորհրդանշումը: Հայտնաբերված այս արժեքավոր նյութերի ցուցադրումը տեղում կազմակերպելու համար որոշվեց բեմի տակ կառուցել նկուղային հարկ-թանգարան: Ներկայումս այդ յուրահատուկ թանգարանային բաժնի շինարարական աշխատանքները ավարտված են, մուտքը, իջնող ստիբաններով, ձևավորված է Մայր Տանարին կից եկեղեցական արվեստի թանգարանի միջից: Բեմի տակի պեղումներից հայտնաբերված ուրարտական կոթողը (ստելլան) դուրս է հանված Մայր Տանարից և կցուցադրվի բակում, հատուկ պատվանդանի վրա:

Բեմի ներքնահարկում հայտնաբերված թունձան տորուչանը պահպանելու համար, բեմը հենվեց երկաթբետոնյա շորս հիմքային սյուների վրա, որոնց վրա կառուցվեց Ավագ Սեղանը:

2. ՄԱՅՐ ՏԱՆԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳՄԲԵԹԸ.— Դեռևս 1920 թվականին փոքր եկած հարավային գմբեթը շատ նկատելի աններդաշնակություն էր ստեղծում Մայր Տանարի արտաքին տեսիլ վրա, մանավանդ արևելյան կողմից դիտելիս:

Հարավային գմբեթը վերակառուցվեց հյուսիսային գմբեթի օրինակով, Գիտա-ռեսուտավրացիոն արվեստանոցի հատուկ նախագծով: Կառուցված գմբեթի մույթերը (պիլոնները) և սյուները, շինարարական նկատառումներով, իրականացվել են երկաթբետոնյա միջուկով և ամրացրել գմբեթը, որը կառուցված է Ջրվեժի տեղական տուֆ ֆարից, իր գույնով և որակով հար և նման Մայր Տանարի երեսապատ ֆարերին:

3. ԽՐԻՄՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ.— Խրիմյան թանգարանի շենքը,

մեկհարկանի, գտնվում է այժմյան Վեհարանի բակում, կառուցված է սրբատաշ տուֆից շատ խնամքով, ծածկված ֆարեք բաղեղով, հարթ տանիքով: Այս տարի առաջին հերթին ծածկվեց կտուրը փայտե երկթեֆ ծաղկեղենով և ցինկապատ թիթեղով, որից հետո լրիվ վերափոխվեցին հատակի սալերը գունավոր մոզաիկայով, տեղադրվեցին նոր լուսամուտներ՝ դրսից մետաղյա ճաղերով և ներսից դռնակներով, անցկացվեց փակ էլեկտրական լուսավորություն և տեղադրվեց կենտրոնական շեռուցում:

4. ՇՔԱՄՈՒՑՔ ԱՇՏԱՐԱԿԱՅԻՆ ԺԱՄԱՅՈՒՅՑՈՒՑՈՒՄԸ.— Նոր Վեհարանի հողամասի պարսպապատման հետևանքով, 1958 թվականին հարց առաջացավ նրա հանդիսավոր շքամուտքի կապակցությամբ: Մայր Աթոռի ճարտարապետական-շինարարական հանձնաժողովը նպատակահարմար գտավ շքամուտքը կառուցել ֆաղափային այգու կողմից, Բաղրամյան փողոցի առանցքով, որը իր մեկ ճակատով պետք է դուրս գա Սինոդի շենքի բակի վրա:

Շքամուտքին տրված է աշտարակի ձև, որի վրա տեղադրված է Բուլղարիայի հայոց բեմի կողմից նվիրված ժամացույցը: Շքամուտքի աշտարակի նախագծի հեղինակն է Մայր Աթոռի ճարտարապետ Արժուրի Գալիկյանը: Շքամուտքը պսակվում է տասներկու կողմանի սյունազարդ գմբեթով, որն իր մեջ պահում է ամեն կես ժամ հենող զանգը:

Շքամուտքն ունի 17 մետր բարձրություն, որը համապատասխանելով Մայր Տանարի փոքր գմբեթների բարձրության, չի հակադրվում և չի նույնանում, այլ որպես հյուսիսային պարիսպը ավարտող մի ամբողջություն, մտնում է Մայր Տանարի անսամբլի մեջ:

5. ՄԱՅՐ ԱԹՈՒՑԻ ՏՊԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ.— Տպարանի շենքի առաջին հարկը արմատական վերանորոգման ենթարկվեց 1958 թվականին: Երկրորդ հարկը այս տարի, համաձայն նոր նախագծի, ամբողջությամբ փակվեց և հարմարեցվեց ժամանակակից տպարանի պահանջներին: Երկրորդ հարկը, ավելի ֆան մեկ մետրով բարձրացնելուց հետո, ծածկվեց մոնոլիտ երկաթբետոնյա ծածկով, ըստ որում զգալապես բարձրացվեցին և ավելացվեցին պատուհանները:

Տպարանի շենքը լինելով Երեմիայի շենքին սիմետրիկ, իր ծավալով պետք է հավասարակշռություն ստեղծի նրա հետ և ճարտարապետական լուծումով մտնի Մայր Տանարի ընդհանուր անսամբլի մեջ:

Համաձայն նախագծի՝ Մայր Աթոռի տպարանը պետք է ունենա հետևյալ բաժինները.



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԱԾ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԳՄՐԵԹԸ

առաջին հարկում՝ տպագրական և կազմա-  
 բարական բաժիններ, երկրորդ հարկում՝  
 գրաշարական, ցինկագրության բաժիններ,  
 «էջմիածին» ամսագրի խմբագրություն և ըն-  
 քերցարան: Առաջին և երկրորդ հարկերը  
 իրար հետ կապվելու են նոր կառուցվող եր-  
 կու աստիճանավանդակներով: Տպարանը  
 սարքավորվելու է ամենաժամանակակից մե-  
 քենաներով, Ամերիկայի հայերի նվիրատու-  
 րյամբ զենված: Շենքը ունենալու է կենտրո-  
 նական ջեռուցում:

6. Ս. ՀՈՒՓՍԻՄՅԻ ՏԱՀԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՒ-  
 ԳՈՒՄԸ.— Անցյալ 1958 թվականին բարե-  
 կարգվեց Ս. Հոփսիմի տանարի հողամա-  
 սը նոր սալահատակով, մայրերով և աստի-  
 նաններով: Քանդվեց ներսի վերջին հարյու-  
 րամյակում կառավարված ծեփը, նրա նախնա-  
 կան վեճ տեսք և հիաստանը շինարարական  
 կոնստրուկցիան վերականգնելու համար:  
 Այս տարի վերափոխվեցին ներսի շարված  
 ֆարերը, արմատական վերանորոգման են-  
 քարկվեցին երկու վերնախորշերը (տրոմպ-  
 ները) և ներքին մակերեսները ամբողջու-  
 րյամբ մաքրվեցին ծեփահան մեխենայով:  
 Արվեստի ինստիտուտի կողմից կատարված  
 մասնակի պեղումները ներսի սալահատա-  
 կում՝ հաստատեցին Տանարի նախնական  
 հատակի 40 սանտիմետր ավելի խոր լինելը:  
 Նրա երեք պիլոնների հիմքում հայտնաբեր-  
 վեցին նախաքրիստոնեական կամ վաղ  
 քրիստոնեական շրջանին պատկանող մի կա-  
 ռուցվածքի ֆիլի խոշոր բեկորներ, իոնիկ-  
 ների զարդաֆանդակներով:

Այսպիսով արմատական վերակառուց-  
 ման ենթարկվեց աշխարհի լավագույն նար-  
 տարապետական հուշարձաններից մեկը՝  
 Հոփսիմի տանարը: Ի նշանավորումն այս  
 աշխատանքների՝ տանարի բակում սրբա-  
 տաշ ֆարից կառուցվեց աղբյուր-հուշարձան՝  
 նարտարապետ Ռ. Իսրայելյանի նախագծով:

7. ՕՇԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈՒԳՈՒ-  
 ՄԸ (Նախագծի ղեկավար՝ հարտարապետ  
 Մ. Մազմանյան).— Վերակառուցվում են  
 Օշականի եկեղեցու հողամասի պարիսպները:  
 Հիմնական վերակառուցման է ենթարկ-  
 վել Ս. Մեսրոպի դամբարանը եկեղեցու բեմի

տակ: Քանդվել է անիմատ կերպով կա-  
 տարված ծեփը սրբատաշ պատերի և ֆարե-  
 քաղի վրայից: Քանդվել են տուֆե հին սա-  
 լահատակը և աստիճանները և փոխարինվել  
 սրբատաշ սալերով և բազալտե աստիճան-  
 ներով: Հղկված և փայլեցված բազալտե հիմ-  
 նաֆարի վրա դրվելու է մեծ Վարդապետի  
 գերեզմանաֆարը բազալտե սրբատաշ ֆա-  
 րից, որի վրա իր իսկ հորինած տառերով  
 գրվելու է ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ: Դամ-  
 բարան իջեցնող աստիճանների դիմաց, նա-  
 խասենյակում, պատի առաջ, կանգնեցվելու  
 է բազալտե մեծածավալ սրբատաշ ֆար, որի  
 վրա գրվելու է Մեսրոպյան այբուբենը:

8. ՇՈՂԱԿԱՔԻ ՎԱՆՔԻ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՎԵ-  
 ՐԱՆՈՐՈՒԳՈՒՄԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՊԱՐՍՊԱ-  
 ՊԱՏՈՒՄԸ.— Վերակառուցվում են և շուտով  
 կավարտվեն Ս. Շողակաքի վանքի հողա-  
 մասի պարիսպները, շարված վարդապույն  
 տուֆով, բազալտե խարխոխի վրա: Եկեղեցու  
 շուրջը կառուցված է նոր մայր, տուֆի շա-  
 փածո սալերից: Ամբողջությամբ վերանոր-  
 ոգվել է եկեղեցու սալահատակը: Մոտ  
 օրերս սկսվելու է սեղանի կառուցումը ֆիլ-  
 զիտի սրբատաշ ֆարից:

Մասնակի վերանորոգումներ կատարվե-  
 ցին նաև նոր Վեհարանում և շրջանային մի  
 շարք եկեղեցիներում: Սկսվել են արդեն Ս.  
 Կայանեի վանքի վերանորոգության նախ-  
 նական աշխատանքները:

Վեհափառ Հայրապետի անմիջական ղե-  
 կավարության տակ, Մայր Աթոռի նարտա-  
 րապետական-շինարարական հանձնաժողո-  
 վը կազմել է 1960 թվականի շինարարական  
 աշխատանքների ընդհանուր ծրագիրը:

Աստուծո օգնականությամբ և Վեհափառ  
 Հայրապետի անմիջական ղեկավարության  
 տակ, ձեռք առնված կազմակերպչական աշ-  
 խատանքների շնորհիվ և Մայր Աթոռին կից  
 նարտարապետական-շինարարական հանձ-  
 նաժողովի անձնվեր մասնակցությամբ, վրս-  
 տան ենք, որ հաջորդ շինարարական տարին  
 կլինի ավելի արդյունավետ, ի մխիթարու-  
 րյուն հայ հավատացյալ ժողովրդի և ի պայ-  
 ծառություն Մայր Աթոռի:

